ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՀՐԱԺԱՐԱԳՐԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ձևաթուղթ FW 001՝ Խնդրանք՝ հրաժարվելու դատարանի վճարներից

Առաջին էջին լրացրեք էջի աջ մասը հետևյալ կերպ՝

1. Երկրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք վարչաշրջանը և դատարանի հասցեն: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
2. Երրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի համարը: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
3. Չորրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի անունը: Գործի անունը տանտիրոջ անունն է ընդդեմ վարձակալի անվան:

Առաջին էջին 1-ից 6-րդ կետերը լրացրեք հետևյալ կերպ՝

1. Կետ 1: Տպեք Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը
2. Կետ 2: Եթե աշխատում եք, ապա տպեք Ձեր աշխատանքի պաշտոնը, գործատուի անունը և գործատուի հասցեն
3. Կետ 3: Եթե չունեք իրավաբան, ապա տպեք «ինքս եմ ինձ ներկայացնում» (self-represented) կամ դատարկ թողեք այդ վանդակը:
4. Կետ 4: «Գերագույն դատարանի» կողքին նշեք առաջին վանդակը
5. Կետ 5: Նշեք A, B կամ C վանդակը: Նշեք երեքից միայն մեկը :
   a. Նշեք A վանդակը, եթե ստանում եք թվարկված որևէ սոցիալական նպաստ: Հավաստիացեք, որ նշել եք այն սոցիալական նպաստը, որը ստանում եք:
   b. Նշեք B վանդակը, եթե չեք ստանում A վանդակի կողքին առկա որևէ թվարկված սոցիալական նպաստ, ԵՎ եթե Ձեր ընտանիքի ամսական եկամուտը հավասար կամ ավելի քիչ է նշված գումարից: Եթե նշում եք այս վանդակը, ապա պետք է լրացնեք 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերը երկրորդ էջում:
   c. Նշեք C վանդակը, եթե Ձեզ չի վերաբերում A կամ B վանդակները: Եթե նշում եք այս վանդակը, ապա պետք է լրացնեք ամբողջ երկրորդ էջը:
6. Կետ 6: Նշեք այս վանդակը, եթե խնդրել եք դատարանին՝ հրաժարվելու դատարանի վճարներից վերջին 6 ամսվա ընթացքում:

Առաջին էջին գրեք ամսաթիվը, տպեք Ձեր անունը և ստորագրեք ներքևի հատվածում:

Երկրորդ էջին տպեք Ձեր անունը, իսկ վերին հատվածում՝ գործի համարը:

Լրացրեք երկրորդ էջի մնացած մասը, միայն եթե առաջին էջում նշել եք 5(b) և 5(c) վանդակները:

1. Եթե առաջին էջում նշել եք 5(b) վանդակը, ապա լրացրեք 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերը: Ահա այստեղ եք նշում Ձեր ընտանիքի ամսական եկամուտը:
2. Եթե առաջին էջում նշել եք 5(c) վանդակը, ապա պետք է լրացնեք ամբողջ երկրորդ էջը: Ահա այստեղ եք նշում Ձեր ընտանիքի ամսական եկամուտը, գումարը և Ձեր ընտանիքի ունեցած սեփականությունը, Ձեր ընտանիքի ամսական նվազեցումները և ծախսերը:

Ձևաթուղթ FW 002՝ Խնդրանք՝ հրաժարվելու դատարանի լրացուցիչ վճարներից

Ծանոթագրություն. Դուք պետք է լրացնեք և ներկայացնեք այս ձևաթուղթը, եթե հայցում եք դատավարություն երդվյալ ատենակալների մասնակցությամբ:

Լրացրեք էջի աջ մասի վանդակները հետևյալ կերպ՝

1. Երկրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք վարչաշրջանը և դատարանի հասցեն: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
2. Երրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի համարը: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
3. Չորրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի անունը: Գործի անունը տանտիրոջ անունն է ընդդեմ վարձակալի անվան:

Լրացրեք 1-ից մինչև 6-րդ կետերը հետևյալ կերպ՝

1. Կետ 1: Տպեք Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը
2. Կետ 2: Եթե չունեք իրավաբան, ապա տպեք «ինքս եմ ինձ ներկայացնում» (self-represented) կամ դատարկ թողեք այդ վանդակը:
3. Կետ 3: Գրեք վճարի հրաժարման Ձեր ամենավերջին խնդրանքի ամսաթիվը, որը տրվել էր դատարանի կողմից: Մի լրացրեք այն, եթե այն առկա չէ:

4. Կետ 4: Նշեք միայն Ձեզ վերաբերող վանդակը, եթե վերջերս հայցել եք դատարանի վճարի հրաժարում:
5. Կետ 5: Նշեք յուրաքանչյուր վանդակ, որ ցանկանում եք, որ դատարանը հրաժարում տրամադրի: Նշեք առաջին վանդակը «Երդվյալ ատենակալների վճարներ և ծախսեր» (Jury fees and expenses), եթե հայցում եք դատավարություն երդվյալ ատենակալների մասնակցությամբ:
6. Կետ 6: Բացատրեք, թե ինչու կարիք ունեք այդ ծառայությունների համար:

Գրեք ամսաթիվը, տպեք Ձեր անունը և ստորագրեք ներքևի մասում:

Ձևաթուղթ FW 003՝ Հրամանագիր դատարանի վճարի հրաժարման մասին

Լրացրեք էջի աջ մասի վանդակները հետևյալ կերպ՝

1. Երկրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք վարչաշրջանը և դատարանի հասցեն: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
2. Երրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի համարը: Այս տեղեկատվությունը կարելի է գտնել հայցադիմումի Դատական ծանուցագիր և բողոք բաժնում:
3. Չորրորդ վանդակ, աջ կողմ՝ Գրեք գործի անունը: Գործի անունը տանտիրոջ անունն է ընդդեմ վարձակալի անվան:

Լրացրեք 1-ին և 2-րդ կետերը հետևյալ կերպ՝

1. Կետ 1: Գրեք Ձեր անունը և հասցեն
2. Կետ 2: Եթե չունեք իրավաբան, ապա տպեք «ինքս եմ ինձ ներկայացնում» (self-represented) կամ դատարկ թողեք այդ վանդակը:

Երկրորդ, երրորդ էջին տպեք Ձեր անունը և գործի համարը էջերի վերին հատվածում:

Մի լրացրեք որևէ այլ բան այս ձևաթղթում: Մնացածը կլրացվի դատարանի կողմից: